ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՆՈՐԻԿ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանք ենք յղում արժանաւոր հայորդուդ՝ ազգային եւ եկեղեցական մեր կեանքում մատուցած զովելի ծառայութիւնների համար:

Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով քաջալերեցակ ենք Ձեր եռանդուն եւ նախանձախնդիր գործունէութեանը: Ազնիւ յանձնառութիւններով ու ջանադրութեամբ Դուք տարիներ շարունակ աջակցում էք Տիրախնամ թեմի գործունէութեանը՝ յանուն Ռուսաստանում մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան արդիւնաւորման եւ բարեպաշտ Մեր զաւակների հոգեւոր ու ազգային կեանքի պայծառութեան: Ձեր անկեղծ եկեղեցասիրութիւնը վկայեցիք նաեւ թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցմանը բերած սրտաբուխ ընծայաբերումով՝ Ձեր արդար վաստակը ծառայեցնելով եկեղեցաշինութեան յաւէտ օրհնեալ գործին:

Որպէս ազգասէր հայորդի, ազնիւ նախաձեռնութիւններով զօրակից էք եղել նաեւ Հայրենի մեր երկրի զօրացմանն ու առաջընթացին եւ Ձեր վաստակը բերել հայրենաշինութեան պատուարժան գործին: Ձեր ազգօգուտ եւ ապրուածահաճոյ իրագործումները, արդարեւ, վկայում են Ձեր հաւատի, հայրենասիրութեան ու եկեղեցասիրութեան մասին՝ պատիւ ու յարգանք բերելով արժանաւոր հայորդուդ:

Բարձր գնահատանքի արժանացնելով Ձեր բազմարդիւն ծառայութիւնները մեր Եկեղեցուն եւ սիրով ընդառաջելով թեմական Առաջնորդի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Մ Ա Ի Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ի Ս Ա Ի Ո Ր Ի Շ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մաղթում ենք, որ նոյն կորովով ու եռանդով շարունակէք Ձեր ազգանպաստ ու հայրենանուէր գործունէութիւնը՝ նորանոր յաջողութիւններով զարդարելով Ձեր կեանքի ընթացքը:

Աղօթում ենք, որ Ամենողորմ Տէրն Իր ամենազօր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով արեւշատ տարիներ եւ ամենայն բարիք:

«Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ Աստուած Հայրն մեր, որ սիրեացն զմեզ, մխիթարեսցէ զսիրտս Ձեր եւ հաստատեսցէ յամենայն բանս եւ ի գործս բարութեան» (Բ. Թեսաղ. Բ.15-16):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 789